ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՊԳՀԾՁԲ-19/40

ք. Երևան «29» «11» 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Նաիրի Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյանը (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մշակութային միջոցառումների և սեմինարների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **3 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3340000 (երեք միլիոն երեք հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) գուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է __4__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	*«Ջանիկ Սևոյան» ԱՁ*
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	*ՀՀ գ. Շահումյան, Գայի 8*
Կառավարական տուն 2,	*«Կոնվերսբանկ» ՓԲԸ*
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	*Հ/Հ 1930070102110100*
Հ/Հ 900011059392	*ՀՎՀՀ 37488172*
ՀՎՀՀ 02698732	
Գլխավոր քարտուղար՝	**Տնօրեն՝**
---------- **Ն. Հարությունյան**	---------- **Ջ. Սևոյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
«29» «11» 2019թ կնքված
ՍՊԳՀԾՁԲ-19/40 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Չափա-բաժին	Գումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության						
		Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը, ՀՀ դրամ	Ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատուցման ժամկետը*
1	79951110/6	մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	**Ծառայությունը նախատեսում է «Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման երևույթը և դրա դեմ պայքարը արծարծող լրագրողական մրցույթ» միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) կազմակերպում :** Միջոցառման նպատակն է՝ 1. խրախուսել Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման/թրաֆիքինգի երևույթի և դրա դեմ պայքարի վերաբերյալ լուսաբանումը, 2. խրախուսել այն լրագրողներին, որոնք իրենց աշխատանքներում անդրադառնում են մարդկանց թրաֆիքինգի երևույթին, հանրությանը տեղեկացնում դրա բացասական ազդեցությունների մասին, մատնացույց անում ելքերը՝ նպաստելով թրաֆիքինգ երևույթի և դրա դեմ պայքարի աշխատանքների մասին հանրային իրազեկման բարձրացմանը: Միջոցառման խնդիրն է Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման երևույթը և դրա դեմ պայքարը արծարծող լրագրողական մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) կազմակերպումն ու անցկացումը: ***<u>Ծառայություն մատուցող կազմակերպությունը միջոցառման կազմակերպման շրջանակներում ապահովելու է՝</u>*** **1. Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում**	դրամ	1	1720000	1720000	Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում

			(միջոցառման օրը համաձայնեցնել երիտասարդական քաղաքականության վարչության (այսուհետ՝ ԵՔ վարչություն) հետ), Մրցույթի ժյուրիի ձևավորումը և ապահովելու է ժյուրիի անդամների գործունեությունը: Ժյուրին կազմված կլինի յոթ անդամից՝ չորս ներկայացուցիչ լրագրողական կազմակերպություններից և երեքը՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով փորձագետներից: Ժյուրիի յուրաքանչյուր անդամ իր գործունեությունն իրականացնելու է մինչև դեկտեմբերի 25-ի ներառյալ, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում: Մրցույթի ժյուրիի անդամները կհաստատեն 1) Մրցույթի անցկացման պայմանները և կարգը, 2) նյութերի ընտրման և գնահատման չափանիշները՝ ելնելով իրենց մասնագիտական փորձից և լրագրողական էթիկայի չափանիշներից: **2. Միջոցառման համակարգողի և համակարգողի օգնականի առկայություն (գործունեության ժամկետը մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում)** համակարգողը ապահովելու է՝ • Մրցույթի մասին հայտարարության հրապարակումը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական վեբ կայքում, www.erit.am կայքում, www.antitrafficking.am կայքում, սոցիալական ցանցերում, առցանց լրատվամիջոցներում, ինչպես նաև էլեկտրոնային նամակներով լրագրողական հանրության իրազեկումը, • հնարավոր հարցերի համակարգումը և ուղղորդումը, • արդյունքների ամփոփումը: **3. Միջոցառման համակարգողի օգնականի առկայություն (գործունեության ժամկետը մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում)** Համակարգողի օգնականը ապահովելու է՝					

			• Մրցույթի մասնակցության դիմում-հայտերի հավաքագրումը, • մասնակիցների հետ հետադարձ կապի ապահովումը, • լրագրողական նյութերի հավաքագրումը: Մրցույթն անցկացվելու է երկու անվանակարգով՝ 1) Հեռուստա/ռադիո արտադրանք, 2) Տպագիր և էլեկտրոնային նյութեր: Մրցույթին կարող են ներկայացվել 2019 թվականի ընթացքում թրաֆիքինգի թեմաներն արծարծող եթեր հեռարձակված/տպագրված լրագրողական նյութերը: **4. Մրցույթի արդյունքների ամփոփում ժյուրիի կողմից:** Յուրաքանչյուր անվանակարգում հանձնվելու են առաջին, երկրորդ և երրորդ տեղերի մրցանակներ: Ժյուրիի մշակած չափորոշիչներին համապատասխանող նյութերի բացակայության դեպքում ժյուրին իրավասու է չշնորհել տվյալ անվանակարգի մրցանակը: ***<u>4.1 Ժյուրիի անդամներին անհրաժեշտ համապատասխան տպագրությամբ փաթեթների ապահովումը (թղթապանակ, նոթատետր, գրիչ):</u>*** **Գրիչ գնդիկավոր 7 հատ** Կապույտ գնդիկավոր գրիչ սպիտակ պլաստմասե կաղապարով՝ վրան տպագրված «ՀՀ-ում թրաֆիքինգի դեմ պայքարը արծարծող լրագրողական մրցույթ» **Նոթատետր 7 հատ** A5 չափի 70 թերթ վերևից պարույրով, վանդակավոր, կազմի վրա տպագրված «ՀՀ-ում թրաֆիքինգի դեմ պայքարը արծարծող լրագրողական մրցույթ» **Թղթապանակ 7 հատ** *Թղթապանակ ռեզինե՝ներով A4 չափի, գույնը կապույտ*, կազմի վրա տպագրված «ՀՀ-ում թրաֆիքինգի դեմ պայքարը արծարծող լրագրողական մրցույթ» **5. 2019 թվականի դեկտեմբերին Երևանում մրցանակաբաշխության անցկացում:** Մրցանակաբաշխության ընթացքում կկազմակերպվի 30 րոպե տևողությամբ դասական կամ ջազային համերգային ծրագիր: Մրցանակաբաշխությունից հետո հաղթողների և հյուրերի համար կկազմակերպվի հյուրասիրություն: ***<u>5.1 Միջոցառման մասնակիցների, հյուրերի և ժյուրիի անդամների համար (Ընդհանուր 40 մարդ) ֆուրշետի կազմակերպումը (1 անգամ, ֆուրշետի կազմակերպման կոնկրետ վայրը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ)</u>***					

Ֆուրշետ (քաղցրավենիք երեք տեսակի, յուրաքանչյուր տեսակից 80 կտոր, միրգ կտրտած, չորս տեսակի (խնձոր 3 կգ., բանան 2 կգ., տանձ 3 կգ., նարինջ 3 կգ.), կանապե երեք տեսակ, յուրաքանչյուր տեսակից 80 կտոր, 40 մասնակիցների համար հյութ, ջուր, սուրճ, թեյ)

5.2 համերգային ծրագիր

Համերգային ծրագրի կազմակերպում 30 րոպե տևողությամբ՝ դասական կամ ջազ խմբերի ընդգրկմամբ՝ հաղորդավարի առկայությամբ:

5.3 Լուսային համակարգ համերգի համար՝

- *շարժական լույս BEAM R7 230WATT (կամ համարժեք) – 10 հատ,*
- *շարժական լույս LED WASH RGBW 30x12WATT (կամ համարժեք) – 6 հատ,*
- *սպոտիկ լույս LED PAR RGBW 54x3 WATT (կամ համարժեք) - 4 հատ,*
- *թարթող լույսեր STROB 2000 WATT (կամ համարժեք) – 1 հատ,*
- *ծխի ապարատներ – 2 հատ,*
- *սպոտիկ լույս PAR 64 (կամ համարժեք) - 4 հատ*

5.4 Ձայնային սարքավորումների համակարգ համերգի համար՝

- *բարձրախոսներ ընդհանուր 10 KWATT հզորությամբ (Passive Line Array System) Seismic Audio, JBL (կամ համարժեք),*
- *մոնիտորային դինամիկներ՝ RMS 300 WATT 8 հատ (JBL, Seismic Audio) (կամ համարժեք),*
- *թվային վահանակ 32 ալիքի համար (YAMAHHA-32) (կամ համարժեք)՝ համերգի ձայնագրման հնարավորությամբ ,*
- *միկրոֆոն (SHURE SM-58, SHURE SM-57, SHURE BETTA-58, BETTA-57, AKG D7, AKG D5, SENNHESER EW100 G3) (կամ համարժեք) 12 հատ լարով, 2 հատ հեռակառավարվող, միկրոֆոնի տակդիր – 14 հատ),*
- *միկրոֆոն հարվածային գործիքների համար – 1 հավաքածու,*
- *ակսեսուարներ՝ նախատեսված բաս կիթառի և սոլոկիթառի համար (Marsshal 300 watt bass amp combo) (կամ համարժեք):*

5.5 համերգային ծրագրի անցկացման համար հարմարավետ տարածքը ապահովում՝

Մրցանակաբաշխությունը կազմակերպելու համար հարմարավետ տաքացվող տարածք, էկրանի, որի վրա

			կցուցադրվի մրցույթում հաղթած մասնակիցների իրականացրած աշխատանքները, ինչպես նաև համապատասխան թվով (40 հատ) աթոռների առկայությամբ: ***5.6 <u>Մրցույթում I, II և III տեղը զբաղեցրած մասնակիցների համար մրցանակների ապահովում՝</u>*** *I, II և III տեղերը զբաղեցրած մասնակիցների համար տակդիրով բյուրեղապակյա մրցանակի, բարձրությունը՝ 15-20 սմ, լայնությունը՝ 8-10 սմ, դիզայն և պատրաստում: Ընդհանուր 6 հատ, յուրաքանչյուր անվանակարգում I, II և III տեղը զբաղեցրած մասնակցի համար: Դիզայնը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:*					
2	79951111/2	սեմինարների կազմակերպման ծառայություններ	**Ծառայությունը նախատեսում է «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջոցառում» դասընթաց-միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) կազմակերպում :** *Միջոցառման նպատակն է բարձրացնել երիտասարդների իրազեկվածության մակարդակը մարդկանց թրաֆիքինգի խնդիրների շուրջ՝ ինտերակտիվ համակարգչային "Brain Ring" ձևաչափով մրցախաղի միջոցով:* *Միջոցառումը կիրականացվի մինչև դեկտեմբերի 25-ը ներառյալ, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում Հայաստանի Հանրապետության 2019 թվականի երիտասարդական մայրաքաղաք Վանաձորում:* *Միջոցառմանը ներգրավված կլինեն Վանաձորից 20 երիտասարդ, որոնցից էլ կձևավորվի 4-հոգանոց 5 թիմ:* *Միջոցառման մասնակցողների համար կկազմակերպվի մեկօրյա դասընթաց: Դասընթացը կվարեն Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետներ, որոնք կփոխանցեն անհրաժեշտ տեղեկատվություն և կուղղորդեն մրցախաղի մասնակիցներին հարցերի ճիշտ պատասխանները գտնելու հարցում:* *Դասընթացի հաջորդ օրը կիրականացվի մրցախաղը՝ նախօրոք մշակված համակարգչային ծրագրի միջոցով: Մրցախաղում նվազագույն ժամանակում առավելագույն միավորներ կուտակած առաջին երեք թիմերը կարժանանան մրցանակների:* ***<u>Ծառայություն մատուցող կազմակերպությունը միջոցառման կազմակերպման շրջանակներում ապահովելու է՝</u>*** **1 Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի,**	դրամ	1	1620000	1620000	Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում

			երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում (միջոցառման օրը համաձայնեցնել երիտասարդական քաղաքականության վարչության (այսուհետ՝ ԵՔ վարչություն) հետ), միջոցառման համակարգողի և համակարգողի օգնականի և երկու փորձագետների առկայությունը **1.1 Միջոցառման համակարգողի առկայություն (գործունեության ժամկետը մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում)** Համակարգողը ապահովելու է՝ • *Միջոցառման համակարգողի օգնականի և երկու փորձագետների աշխատանքների համակարգումը,* • *Դասընթացի փարածքի հարմարեցում և ուսումնական նյութերի նախապատրաստում,* • *Հնարավոր հարցերի համակարգում և ուղղորդում,* • *Ծրագրի ընթացքի վերաբերյալ տեղեկանքների ներկայացում Նախարարությանը:* **1.2 Միջոցառման համակարգողի օգնականի առկայություն (գործունեության ժամկետը մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում)** Համակարգողի օգնականը ապահովելու է՝ • *Դասընթացի մասնակցության դիմում-հայտերի հավաքագրում,* • *Մասնակիցների հետ հետադարձ կապի ապահովում,* • *Մրցախաղի վարումը:* **1.3 Միջոցառման եկու փորձագետների առկայություն (գործունեության ժամկետը մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում)** Փորձագետները ապահովելու են՝ • *մրցախաղի հարցաշարերի պատրաստումը,* • *դասընթացի թեմաների հստակեցումը,*					

			• *դասընթացի անցկացումը,* • *մրցախաղի վերլուծության իրականացումը,* • *փորձագիտական խորհրդատվության տրամադրումը:* **2 Դասընթացի անցկացման համար Միջոցառման համակարգողի, համակարգողի օգնականի և երկու փորձագետների ուղևորափոխադրումը Երևան-Վանաձոր և Վանաձոր-Երևան** *Երևան-Վանաձոր-Երևան (4 նստատեղ)* Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, նոր անվադողերով, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, օդափոխիչ և այլն): **3 Դասընթացի անցկացման համար Միջոցառման համակարգողի, համակարգողի օգնականի և երկու փորձագետների կեցությունն ու սնունդը** **Հյուրանոց Վանաձորում** 4 անձի համար մեկտեղանոց՝ մեկ մահճակալով տաքացվող համարներում, 3 գիշերակաց և 3 օր սննդի ապահովման ծառայության ձեռք բերում (1-ին օրը ընթրիք, 2-3-րդ օրերը նախաճաշ, ճաշ, ընթրիք): Սնունդը՝ նախաճաշ (կարագ, պանիր, հաց, հիմնական ուտեստ (նրբերշիկ կամ պյուրե կամ ձվածեղ կամ խաշած ձու), թեյ, սուրճ), ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) ընթրիք (հաց, 2 տեսակի աղցան, հիմնական ուտեստ՝ խավարտով ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ, սուրճ): **4 Դասընթացի անցկացման համար մասնակիցների և Միջոցառման համակարգողի, համակարգողի օգնականի և երկու փորձագետների սննդի և սուրճի ընդմիջման կազմակրպումը** 24 անձի համար 2 օր սուրճի ընդմիջման ապահովում Յուրաքանչյուր օրվա համար՝ քաղցրավենիք երեք տեսակի, յուրաքանչյուր տեսակից 40 կտոր, միրգ կտրտած, չորս տեսակի (խնձոր 2 կգ., բանան 2 կգ., տանձ 2 կգ., նարինջ 3 կգ.), 20 մասնակիցների համար հյութ, ջուր, սուրճ, թեյ: 20 անձի համար 2 օր սննդի ապահովում ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք)					

			ընթրիք (հաց, 2 տեսակի աղցան, հիմնական ուտեստ՝ խավարտով ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ, մուրճ): *5 Պաստառի դիզային և տպագրություն համապատասխան ուրքերով (Roll up)* Մեկ պաստառի դիզայն (համաձայնեցնել ԵՔ վարչության հետ) և տպագրություն, չափը՝ 2մ x 1.3մ, վրան տպագրված «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջոցառում» *6 Դասընթացի մասնակիցների համար գրենական պիտույքների փաթեթներ՝ համապատասխան տպագրությամբ* թղթապանակ, նոթատետր, գրիչ, անվանակ (բաջ) 20 մասնակիցների համար **Գրիչ գնդիկավոր 20 հատ, վրան տպագրված «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջոցառում»** Կապույտ գնդիկավոր գրիչ թափանցիկ պլաստմասե կաղապարով **Նոթատետր 20 հատ, վրան տպագրված «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջոցառում»** A5 չափի 70 թերթ վերևից պարույրով, վանդակավոր **Թղթապանակ 20 հատ, վրան տպագրված «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջոցառում»** *Թղթապանակ ռետիններով A4 չափի, գույնը կապույտ* **Անվանաքարտ (բաջ) 20 հատ, վրան տպագրված «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի** Ուղղանկյունաձև անվանաքարտ կապույտ ժապավենով: *7 Մրցախաղի մասնակիցների համար փաթեթներ* Շապիկ, գլխարկ 20 մասնակիցների համար **Շապիկ 20 հատ, վրան տպագրված «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջոցառում»** 4 հատ կապույտ շապիկ (չափը մասնակիցների չափսերի համապատասխան), վրան սպիտակ գույնով տպագրված «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջոցառում» 4 հատ կանաչ շապիկ (չափը մասնակիցների չափսերի համապատասխան), վրան սպիտակ գույնով տպագրված «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջոցառում»					

			4 հատ կարմիր շապիկ (չափը մասնակիցների չափսերի համապատասխան), վրան սպիտակ գույնով տպագրված «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջոցառում» 4 հատ դեղին շապիկ (չափը մասնակիցների չափսերի համապատասխան), վրան սպիտակ գույնով տպագրված «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջոցառում» 4 հատ մանուշակագույն շապիկ (չափը մասնակիցների չափսերի համապատասխան), վրան սպիտակ գույնով տպագրված «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջոցառում» **Գլխարկ 20 հատ, վրան տպագրված «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջոցառում»** 4 հատ կապույտ գլխարկ վրան սպիտակ գույնով տպագրված «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջոցառում» 4 հատ կանաչ գլխարկ վրան սպիտակ գույնով տպագրված «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջոցառում» 4 հատ կարմիր գլխարկ վրան սպիտակ գույնով տպագրված «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջոցառում» 4 հատ դեղին գլխարկ վրան սպիտակ գույնով տպագրված «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջոցառում» 4 հատ մանուշակագույն գլխարկ վրան սպիտակ գույնով տպագրված «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջոցառում» ***8 Մրցախաղի համակարգչային ծրագրի ադապտացիան և հարցաշարի մուտքագրումը*** *Մրցախաղի համակարգչային ծրագրի ադապտացիա հարցաշարի մուտքագում (1 փաթեթ)* ***9 Մրցախաղի անցկացման համար սարքավորումներ*** *Լափթոփների ապահովում 6 հատ: Յուրաքանչյուր խմբին մեկ լափթոփ և մեկ լափթոթ խաղը վարողի համար:* ***10 Մրցախաղի անցկացման համար լրացուցիչ սարքավորումներ՝ խոսափող, արտապատկերիչ, բաշխիչ սարք և մալուխներ*** *Բարձրախոս առնվազն 2 հատ, շարժական միկրոֆոն հեռակառավարմամբ առնվազն 6 հատ, հագուստին ամրացվող հեռակառավարմամբ միկրոֆոն առնվազն 1 հատ,*					

			արտաքին 1 հատ, էկրան 1 հատ 2.0մ x 1.5մ, բաշխիչ սարք (splitter բաժանարար) և մալուխներ 6 հատ: ***11 Մրցախաղի հաղթող թիմի համար մրցանակներ*** Ապակյան (օրգանական) մրցանակ տակդիրով, բարձրությունը՝ 15-20 սմ, լայնությունը՝ 8-10 սմ, դիզայն և պատրաստում I, II և III տեղերը զբաղեցրած մասնակիցների համար: Ընդհանուր 3 հատ, I, II և III տեղը զբաղեցրած խմբերի համար: Դիզայնը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:					

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ **Ն. Հարությունյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

_____ **Ջ. Սևոյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 29» « 11 » 2019թ. կնքված
ՍՊԳՀԾՁԲ-19/40 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Դիմաց, վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**			
			հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր մինչև 30-ը	Ընդամենը
1	79951110/6	Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ			1720000	1720000
2	79951111/2	Սեմինարների կազմակերպման ծառայություններ			1620000	1620000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ն. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Ջ. Սևոյան
(ստորագրություն)
Կ.Տ.